ԿԱՐԾԻՔ

Նաիրա Սամվելի Հարությունյանի՝ «Երիտասարդների նպատակային դիրքորոշումների եվ սոցիալական սպասումների ազդեցությունն ինքնագնահատականի վրա» թեմայով

ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Ժամանակակից տրանսֆորմացիոն հասարակության վրա իրենց մեծ ազդեցությունն են թողնում մերօրյա մշակութային, սոցիալ-տնտեսական փոփոխությունները: Վերջին տարիները ի ցույց դրեցին, որ դրանց ամենաակտիվ կրողներն երիտասարդներն են, ովքեր այս թվային աշխարհում իրենց առաջ դնում են առավել կոնկրետ պահանջներ: Նրանք բազմագործառույթային են, ունեն հետաքրքրությունների լայն շրջանակ, իսկ նրանց նպատակային դիրքորոշումներն ու սոցիալական սպասումները մեծ ազդեցություն են ունենում իրենց իսկ ինքնագնահատականի վրա: Այն անձի սեփական արժանիքների և ունակությունների գնահատումն է, ինչը ձևավորվում է տարբեր գործոնների, սոցիալական սպասումների, անձնական փորձառության, սոցիալական միջավայրի և նպատակային դիրքորոշումների ազդեցությամբ: Ինքնագնահատականը համարվելով անձի հոգեբանական և սոցիալական զարգացման հիմնական բաղադրիչ ուղղակիորեն առնչվում է կյանքի որակի, նպատակադրման, որոշումների կայացման վրա: Ի. Ս. Կոնը ինքնագնահատականը սահմանում էր որպես «ինքնագիտակցության բաղադրիչ, որը ներառում է ոչ միայն սեփական անձի մասին գիտելիքները, այլև սեփական անձի, կարողությունների, բարոյական որակների և արարքների գնահատականները»:

Հոգեբանական գիտական գրականության ուսումնասիրություններում հեղինակները բազմիցս անդրադարձ են կատարել ատենախոսի կողմից քննարկվող

հասկացություններին, դիտարկել դրանք տարբեր տեսանկյուններից: Դ. Ուզնաձեն, հաղթահարելով ներհայեցողության և բիհեյվիորիզմի մեթոդոլոգիական սահմանափակությունը, դիրքորոշումը ձևակերպում է որպես սուբյեկտի ամբողջական պատրաստականություն ընկալելու ապագա իրադարձությունները և իրագործելու նպատակասլաց գործունեություն: Իսկ հոգեբանական գրականության մեջ դիրքորոշման հիերարխիկ մոդելի երկրորդ մակարդակում Ա.Ասմոլովը դիտարկում էր նպատակային դիրքորոշումները, այն սահմանափակումներն ու ցանկություններնը որոնք անձը ընտրում է իր ապագայի համար: Սոցիալական սպասումները մի շարք գիտնականների կողմից դիտարկվում են որպես նորմատիվային վարքի կարևոր բաղադրիչ: Դրանք կարող են ազդեցություն ունենալ երիտասարդների որոշումների, արժեքների և իհարկե սոցիալական վարքի վրա:

Թերևս ինչքան էլ անդրադարձ կատարված լինեն վերոնշյալ հոգեբանական հասկացություններին, միևնույն է դրանք նորօրյա հետազոտության և լրամշակման կարիք ունեն և մի շարք այլ մոտեցումներ իրենց լուծումներն են պահանջում:

Տվյալ հետազոտության արդիականությունը հեղինակը հիմնավորում և պայմանավորում է նրանով, որ երիտասարդների նպատակների սահմանման, սոցիալական սպասումների և ինքնագնահատականի միջև փոխհարաբերությունները կարևոր հետևանքներ կարող են ունենալ հասարակության համար, մասնավորապես առողջ ինքնագնահատական ունեցող երիտասարդներներն ավելի հաճախ են իրենց առջև դնում հավակնոտ նպատակներ և վստահորեն հասնում դրանց: Ինքնագնահատականի վրա ազդող գործոնները, ինչպիսիք են սոցիալական սպասումները և համակարգային խոչընդոտները հասարակությունը կարող է նվազեցնել անհավասարությունը և խթանել սոցիալական մոբիլությունը:

Ատենախոսն առանձին անդրադառնում է «նպատակային դիրքորոշումներ», «սոցիալական սպասումներ», «ինքնագնահատական», հոգեբանական եզրույթներին: Վեր հանում նպատակային դիրքորոշումների, սոցիալական սպասումների սոցիալ-հոգեբանական մեթոդական հիմքերը, տեսակները և դրսևորման բաղադրիչները,

սպասումները դիտարկում որպես եռամակարդակ մոդել, մեկնաբանում «սոցիալական ժամացույց» հասկացությունը, որպես մշակութային ժամանակացույցի և մարդու կյանքի սոցիալական կարևոր իրադարձությունների համապատասխանություն: Հենվելով հոգեբանության բնագավառի ռուսական և արևմտյան տեսությունների վրա (Լ. Ֆեստինգեր, Ջ.Ատկինսոն, Մ.Գոմելաուիրի, ԶԱ.Ասմոլով, Դ. Ուզնաձե և այլք) հատուկ շեշտադրում է անձի ինքնագնահատականի վրա սպասումների և նպատակային դիրքորոշումների տարբեր բաղադրիչների ազդեցությունը՝ վեր հանելով դրանցում արտահայտված վարքային և անձնային առանձնահատկությունները:

Ն. Հարությունյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսության ծավալը կազմում է 175 համակարգչային էջ, բաղկացած ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, 186 անուն տարալեզու գրականության ցանկից և հավելվածից:

Ներածական հատվածում ատենախոսը հիմնավորել է ընտրված թեմայի արդիականությունը, ձևակերպել է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, առաջադրել վարկած, համաձայն որի նվաճման տարբեր մոտիվացիա ունեցող երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունը պայմանավորված է ռեֆլեքսիվության մակարդակով: Շարադրված են հետազոտության մշակվածության աստիճանը և մեթոդաբանական հիմքերը, տեսագործնական նշանակությունը, ընտրակազմը և կրառված մեթոդներն ու մեթոդիկաները: Հստակ ձևակերպված են պաշտպանությանն ներկայացվող դրույթները և գիտական նորույթը:

Աշխատանքի առաջին՝ «Նպատակային դիրքորոշումների եվ սոցիալական սպասումների գիտական հայեցակարգերի տեսական վերլուծություն» գլխում, որը ներառում է չորս ենթագլուխ ներկայացվում է «նպատակային դիրքորոշումներ», «սոցիալական սպասումներ» հոգեբանական գիտական հասկացությունները,

կառուցվածքային բաղադրիչները, առանձնահատկությունները՝ վերջիններս դիտարկելով սոցիալ-հոգեբանական տեսանկյունով:

Ատենախոսության երկրորդ՝ «Երիտասարդության շրջանում նպատակային դիրքորոշումների եվ սոցիալական սպասումների ձեվավորման և դրսեվորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» գլխում հեղինակը անդրադառնում է ընտրված տարիքին՝ երիտասարդությանը, վերլուծում այն որպես հոգեբանական տարիք, մեկնաբանում պարբերացումը, դրանից բխող սոցիալ-հոգբանական առանձնահատկությունները, կատարում դատողություններ և եզրահանգումներ:

Ատենախոսության երրորդ՝ «Երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների եվ սոցիալական սպասումների ազդեցության փորձարարական ուսումնասիրություն» գլխում Ն. Հարությունյանը անդրադառնում է ընտրանքին, բուն էմպիրիկ հետազոտությանը, փորձարարական փուլերին, արդյունքների վերլուծությանը: Հեղինակը հիմնավորել է հետազոտության ռազմավարությունը, մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը, Արձանագրված արդյունքները ենթարկել է որակական և մաթեմատիկական վիճակագրության վերլուծության, ինչը առավել համոզիչ և հավաստի է դարձնում հետազոտության ստացված արդյունքները :

Ատենախոսի կողմից ներկայացրած հետազոտությունը կատարված է գիտական ճշգրտությամբ, իսկ ստացված արդյունքները հիմնավորված: Ստացված եզրակացությունները համապատասխանում են առաջադրված խնդիրներին: Սեղմագիրը հակիրճ պարունակում է ատենախոսության բովանդակությունը, պաշտպանությանը ներկայացված դրույթները և աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումները:

Ատենախոսի կողմից կատարվել է լուրջ, երկարատև և բազմակողմանի աշխատանք: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ առկա են որոշակի վիճահարույց հարցեր.

1. Ատենախոսության երեք գլուխներն անհամաչափ են բաշխված, մասնավորապես՝ առաջին գլուխը՝ 86 էջ առավել ծավալուն է իր ենթագլուխներով, երկրորդ գլուխը բաղկացած է ընդամենը 19 էջից, իսկ երրորդ գլխի ենթագլուխները կարող էին միավորվել պահպանելով համաչափությունը, քանզի ցանկալի չէ յուրաքանչյուր կիրառված մեթոդիկան անվանել ենթագլուխներով:
2. Ատենախոսությունը ծավալուն և բազմաբովանդակ է, ցանկալի կլիներ, որ հեղինակի կողմից ներկայացված արդիականությունը լիներ առավել կոնկրետ և դիպուկ:
3. Պաշտպանության ներկայացված դրույթներից 3-րդ դրույթում առկա է հակասություն, ցանկալի կլիներ, որ հեղինակը տար առավել հասկանալի մեկնաբանություն, կամ վերաձևակերպեր:
4. Ատենախոսության մեջ առկա են տեխնիկական վրիպակներ և թերություններ, մասնավորապես՝ քերականական սխալներ, բացթողումներ, նկարը՝ գծապատկեր անվանումով փոխարինում, տարբեր տեղերում հեղինակների անվանումների տարբեր օրինակներ, այլալեզու գործածություններ:

Կարծում ենք նշված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը, քանի որ ատենախոսն իրականացրել է բավականին ծավալով տեսական վերլուծություն և փորձարարական հետազոտություն:

Ատենախոսությունը գիտական պատշաճ մակարդակով գրված հոգեբանական աշխատություն է, ներկայացնում է հոգեբանության բնագավառի կարևոր նորույթ

պարունակող խնդիր, իր բովանդակությամբ և ձևակերպումներով համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի՝ գիտության տվյալ բնագավառում կարևոր խնդրի լուծում պահանջին, իսկ հեղինակը՝ Նաիրա Սամվելի Հարությունյանը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ.Ռ. Արամյան

Լ. Ռ. Արամյանի ստորագրությունը հաստատում եմ

Գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մ.Մ.Իսպիրյան

Ք. Երևան , 08.07.24 թ.